

«ՈՂՋ ՊՐՈԲԼԵՄԸ ՓՈՐԻ ՄԵՋ Է»

ԳԱԱ տարեկան հաշվետու ժողովին ամբիոնից հայտարարեց ակադեմիկոս Դավիթ Սեդրակյանը, ղեկավարելով թե «եթե փող չկա, մնացած խոսակցությունն իզուր է»: Մյուսների ելույթներն էլ այս ոգով էին. գիտնականները, ինչդեռ միշտ, բողոքեցին ղեկավարության անտարբերությունից և, կենտրոնանալով միայն ֆինանսավորման վրա, մոռացան, որ հաշվետու ժողովը ենթադրում է արածի ու չարածի ներկայացում:



վեճի, և Գաղտնի Տանտիչը «Գալակտիկայի» աշխատակիցներին սաստեց, որ գոնե իրեն իրավունք չունեն որեւէ հարցում մեղադրել, քանի որ իրենից շատ ոչ ոք այս երկրի համար չի արել:

Սակայն գոնե անցյալ տարվա ԳԱԱ-ի արածի մասին ղեկավարացում չկարողացանք կազմել, քանի որ հաշվետու ժողովին «Առավոտը» իրավիրված չէր և, ուշացած ներկայանալով, ԳԱԱ նախագահի և կառավարության անդամների ելույթները բաց թողեցինք: Միայն ԿԳ նախարար Լեւոն Մկրտչյանի ելույթին հասանք: Նախարարը կարեւորեց ղեկավարության համար մեր գիտության հիմնական զարգացման ուղղությունները որոշելը: Ավելի ուշ ակադեմիկոս Դավիթ Սեդրակյանը նկատեց, որ արդեն քանի տարի խոսում ենք Հայաստանի գիտության գերակա ուղղությունները որոշելու անհրաժեշտությունից ու չենք որոշում: Նաև ներկայացավ (ընդհանրապես ներկայացածի կեցվածքը գերիշխող էր այս ժողովում), թե «*ղետությունը թող տղամարդավարի ասի, որ չի կարող փող տալ գիտությանը ու մեզ ասի՝ գնացեք, որտեղից ուզում եք փող ճարեք, մենք էլ կճարենք*»: Ղետությունն արդեն տասը տարուց ավելի այս բանն ասում է՝ գիտության հանդեպ իր վերաբերմունքով, սակայն գիտնականներն ամենեւին էլ չեն գնում ու փող ճարում, այլ սովետական տարիների սովորույթի ուժով, երբ իրենք նստած՝ ղեկավարությունը փողը հասցնում էր, անընդհատ ղախանջում են, որ փող տան: Բայց նոր ժամանակի ղախանջներին չեն հար-

մարվում ու մոռանում, որ ողջ աշխարհում գիտությունը լավ վաճառվող է շահութաբեր աղբյուր է: Ֆինանսավորման որոբլեմի հետ կապված ԿԳ նախարարը նկատեց. «*Ես խորապես համոզված եմ, որ այս կառավարման ղայմաններում դրամական միջոցների նույնիսկ մեկ-երկու անգամ ավելացումը խնդիրը չի կարող լուծել, որովհետև դանայան տակառի իրավիճակում ենք: Միայն ՄԽԿ-ի (Միջազգային գիտատեխնիկական կենտրոն- Ն. Գ.) գրանտների միջոցով առայսօր ՀՀ-ում մեր գիտնականները ձեռք են բերել 14 մլն 131 հազար դոլար, որից ԳԱԱ-ն՝ 3 մլն 882 հազար*»: Գիտնականներին ոգեւորեց ԿԳ նախարարի հայտնած այն լուրը, որ ինստիտուտների ֆինանսավորումը այսուհետև ուղղակիորեն կարվի, ոչ թե ԳԱԱ նախագահությանը միջնորդավորված, այսինքն՝ ինստիտուտները իրավաբանական անձի կարգավիճակ, հետեւաբար՝ լիակատար ֆինանսական ինքնավարություն կստանան:

Համաձայնելով ԳԱԱ նախագահի այն գնահատականին, որ գիտությունը չոքտեք է հանձնել չինովնիկներին, ԿԳ նախարարը նկատեց. «*Գիտությունը չի կարելի հանձնել չինովնիկներին, այդ թվում նաև՝ ակադեմիկական չինովնիկներին: Բոլոր ոլորտներում չինովնիկությունը՝ իր վատ իմաստով, շատ արագ ձեւավորվում է, եթե կոլեկտիվները չեն կարողանում տեր կանգնել իրենց իրավունքներին*»: